

ԵՂԵՇԵ ՉԱՐԵՆՑԻ «ԴԱՆԹԵԱԿԱՆ ԱՌԱՍՊԵՐ»

Ա. Գ. ՉԱՔԱՐՅԱՆ

Զարենցագետ Գառնիկ Անանյանի հավաստումով Հայկական կամավորական Ե-րդ գումարտակի շարքերում մեկ ամսի չափ վարժվելուց հետո Եղիշե Չարենցը 1915-ի սեպտեմբերի 30-ին արդեն մարտական լվիճակում էր՝ Քանաքեռից Երևան ճանապարհին¹։ Հավաստումը, ինչպես պոեմի քննութամբ արձանագրվելու է ստորև, համընկնում է «Մենք ճամփա ընկանք առավոտ ծեղին» տողով սկսվող «Դանթեական առասպելի» դրվագների ընդհանուր ընթացքին։ Ուրեմն դառնանք Դեյր-Ջոր հիշեցնող այդ դանտեական դժոխային ճանապարհին, հանգույց առ հանգույց՝ ըստ բովանդակության և վայրերի բնույթի ու տեղանքի, պարզելու համար, թե այդ ո՞ր ճանապարհներով է անցել և ի՞նչ մարտեր է մղել Հայկական կամավորական Ե-րդ գումարտակը, որի անդրադարձումն է «Դանթեականը»։

Պոեմի առաջին գլխում պատկերվող «...ուրախ, անհոգ, անվտանգ» երթը երրորդ գլխի «Եվ ուրախ էինք այդպես-երեք օր» տողից սկսած փոխակերպվում է միանգամից։ Որոշակիորեն մինչև այստեղ Քանաքեռից Երևան—էջմիածին—Իգդիր և փոքր-ինչ հետո ճանապարհն է՝ հայրենի աշնանային պերճաշուր արևի, բերք ու բարիքի հարդարանքով։

Այնուհետև մեկը մեկից թափ առնող վերաճումներով պոեմը հազնում է ողբերգական-մղձավանջային մի բովանդակությամբ, որը միաժամանակ և՛ մարդ անհատի, և՛ մի ամբողջ ժողովրդի, և՛ համամարդկային ծառացում է ընդդեմ բոլոր ժամանակների և բոլոր տեսակի պատերազմական արյունահեղության ու ավերմունքի։ Նախերգ հիշեցնող առաջին գլխին հաջորդած դրամատիկ յոթ ղողանջներով ծառացում՝ ծայր առած այն կետից, երբ «երդեր ասող», «զենքերի փայլով հրճվող» երիտասարդները տեսնում են ճամփազրին ընկած մի դիակ՝ առաջին դիակը...

Այս պահից պոեմն առաջանում է բնության ու կյանքի հավիտենական շնչառության և մարդկային ճակատագրում պատերազմ կոչվող աղետի հակոտնյա երկձայն-երկալիք շիկացումներով, երբեմն խոհականորեն ու հուզականորեն բեկբեկուն, երբեմն պայթուցիկ, նման հակադարձությամբ.

մի ալիքով՝

...Արևի հսկա մատները իջան
Ու դուրդուրեցին հեռունները թաց։
Հավիտյան վազող ու միշտ ժրաջան՝
Խոտերի միջից առվակը խնդաց։
Եվ թեթև՝ նետած սլաքի նման
Դեմից մի թռչուն անցավ սրբնթաց...²

մյուս ալիքով՝

...Ինչո՞ւ է երազն այս աշխարհավեր
Կախվել մեր գլխին այսպես կուրորեն։
Ինչո՞ւ են փռում այսքան ցավ, ավեր,
Հողմերը այս շար ե՞րբ պիտի լռեն։
Եվ ո՞վ է լարում այսպիսի դավեր—
Կյանքը դարձնում նզովյալ գեհեն (17)։

¹ Գ. Անանյան, Եղիշե Չարենց, Երևան, 1987, էջ 34։

² Ե. Չարենց, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1963, էջ 17։ Այսուհետ այս ժողովածուից արվող մեջբերումների էջերը կնշվեն ընդգրկված էջից։

Ապա մեկ դիակին հաջորդում են դիակներ, էլի՜ դիակներ, անվերջ դիակներ... Հենց այսպես էլ, ինչպես նկատել է Ս. Աղաբաբյանը, բանականը «...շրջվում է դեպի բանականության հսկողությունից դուրս ընկած իրականության ամենասուր ոլորտը՝ մարդկայնությունը կորցնող մատուցող ֆաբլիկաթի ոլորտը: ...Դիսավոր խնդիր է դառնում մարդու հոգեկան փլուզումը, մարդու կոշումը կորցնելու ողբերգությունը»³:

Ողբերգություն, որի ծանրության բոլոր մեծ ու փոքր կետերն ու կենտրոնները անբաժան են մի ամբողջ ժողովրդի ճակատագրից: Բնականաբար հարց է ծագում. ռազմական գործողությունների այդ ո՞ր, այդչափ արնաշաղախ թատերաբեմով է անցել 6-րդ գումարտակը՝ առանց կռիվների, բայց դիակների միջով և հասել Վան: Անկասկած, Ալաշկերտի հովտով, և ճիշտ այն ճանապարհներով ու լեռնային կածաններով, որոնցով ռուսական զորքերը հարձակողական գրոհներով 1915-ի մայիսի 3-ին հասել էին Վան: Ամենաառաջինը հասել էր խնդրի հեծյալ ջոկատը, ապա Վարդանի գլխավորած գումարտակը՝ գեներալ Նիկոլայի զորաբաժնում⁴:

Հայտնի է: սակայն, որ շուտով 1915-ի հուլիսի 9-ին հակահարձակման էին անցել թուրքերը, և նրանց մեծաքանակ հարվածային դիվիզիաները հուլիսի 22-ին, առաջ շարժվելով, դիրքեր էին գրավել Արարատի հարավային թիկունքում, նախապատրաստվելով Իգդիր—Երևան գրոհի: Սա այն նահանջն է, որի օրերին Վանա լճի եզերքին գորավար Անդրանիկը հայտարարում է «միանգամայն կեղծ», «Հայաստանն առանց հայերի» թողնելու մտադրության արտահայտություն և «կրծքից պոկելով Գեորգիայան խաչը՝ շարտում է դեպի»⁵: Սա այն նահանջն է, որի փակագծերը արդեն բաց էին 1915-ի փետրվարի վերջերին, երբ «հայասեր» Միլյուկովը բժիշկ Հ. Զավրիևին ուղղակի հայտարարել էր՝ «արևմտահայերի հետ միանալու ռուսահայերի ձգտումը կավարտվի աղետով» հայերի համար, քանի որ Ռուսաստանը «չի հանդուրժի այդ», իմա այդպիսի միավորումը, քանի որ «մեր հերթական և ամենակարևոր խնդիրը նեղուցների խնդիրն է և Կ. Պոլսի առումը»⁶:

Բայց, ահա, նոր համալրումներով (որոնց թվում Հայկական կամավորական 6-րդ գումարտակը) նորից հարձակման անցած ռուսական զորքերի ճնշման տակ նույն ճանապարհներով հետ էին քաշվել թուրքերը:

Եղիշե Զարենցի «Դանթեական առասպելը» այս երիցս արնաշաղախ, տեղահան զանգվածների դիակներով ծածկված, տեղում խողովակված հայ ժողովրդի և նրա հայրենիքի ողբերգության ահազանգ է, հայոց եղեռնի գերհզոր վավերագիր, որը պետք է ներկայանա և իր խոսքն ասի հայոց դատի բոլոր ատյաններին... արձագանք գտնելով խիղճ ունեցող մարդկային բոլոր հոգիներում: Պոեմի մասին խոսվել է շատ, և, իհարկե, այն գնահատվել է ըստ արժանվույն, համարվել է նաև պացիֆիստական:

Առաջին էջից վերջինը «Դանթեական առասպելը» ցավատանջ բողոք է, ութը համազանգով ահազանգվող բողոք հանուն ոտնահարված հայրենիքի ու ժողովրդի: Ըստ այդմ, այս տեսանկյունից կարոտ է ըստ ամենայնի և ըստ համադանդերի վերլուծության ու մեկնության:

Նախ, կրկնելով, ավելացնենք, որ, թերևս, չնչին զիզազանքով, այդ ճանապարհը համընկնում է գեներալ Նիկոլայի զորամասի կազմում Հայկական կամավորական 2-րդ գումարտակի 1914-ի նոյեմբերից—1915-ի մայիս անցած՝ Երևան—Իգդիր—Բայազետ—Բերկրի—Վան ճանապարհին, որով և զորքերը հետ էին մղվել թուրքերի կողմից: Ասել է, այս ընթացքով «Դանթեականի» երկրորդ գլխում հիշատակվող դիակները Արարատի հարավային թիկունքում ընկած դիակներն են... որին և հաջորդում են հայոց հովիտների

³ Ս. Աղաբաբյան, Եղիշե Զարենց, դիրք 1, Երևան, 1973, էջ 117:

⁴ А. О. Арутюнян, Кавказский фронт. 1914—1917, Ереван, 1971, с. 184—202.

⁵ Նույն տեղում, էջ 300—302:

⁶ Զ. Կիրակոսյան, Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, Երևան, 1965, էջ 379:

պատկերները՝ պարուրված երիտասարդ բանաստեղծի աղեկտուր մտորումներով.

...Ա՛խ, ո՛չ... Սատանա՛ն քրքջացել է այս
Ոսկի դաշտերի քնքշությանը խոր,
Փռել է կարմիր խորշակ ու երաշտ,
Վառել է ոսկի հասկերը բոլոր... (18):

Ապա հակոտնյան՝

...Լուսնոտի նման բուրբ ու շվարած՝
Այլևս ոչինչ չէինք նկատում:
Մի անհուն կսկիծ ուսերիս առած՝
Լուռ քայլում էինք արնաբույր տոթում (18—19):

Գումարտակի անցած ճանապարհով կարելի է վերականգնել և իրիկնամուտին մտած այն գլուղը, որի «Անունն էր միայն, իսկ ինքը չկար: Այլանդակ գուղձեր՝ դեկ ապարանք» (19): Հետո կամավորների ճամփան արդեն լեռնոտ էր:

Կյանքի վերջին տարիներին Չարենցը հարկ է համարել անդրադառնալ իր պոեմներին և հատկապես մշակել է «Դանթեականը»: Առանձնապես կարևոր են երրորդ գլխի այս երկու հատվածը, որոնց հիման վրա կարելի է ճշգրիտ գծագրել գումարտակի անցած ուղին.

...Ես չեմ մոռացել մեր վերելքը թեք
Թափարիզ լեռան ծերպերով անտես:
Այնքան գեղեցիկ չի՝ եղել երբեք
Տոկացող կամքի մաքառումը վես:
Թվում էր, թե հին ասպետներ ենք մենք,
Եվ վեր է մղում սուրբ ցնորքը մեզ:—

...Իսկ ձյունոտ ուղին խաբող էր ու նենգ՝
Սայթաքում էինք, բայց անցնում առաջ...⁷:

Այսպես, «Գիրք ճանապարհի» դառնաշունչ մտահղացումների հետ միասին, «Դանթեականի» պարունակներով Չարենցն անցնում էր կորուսյալ հայրենիքի ճանապարհներով, թղթին հանձնելու համար յուր շանթեղվող հայրենացավը: Թղթին է հանձնում՝ հանուն Ավետյաց հայրենիքի «տոկացող կամքով» մաքառման ելած կամավորների ասպետական հին սուրբ ցնորքը՝ կտակելու սերունդներին... Եվ ինչ տողեր են հաջորդում քաղված այդ հատվածին.

...Վագրերի նման ճկուն էինք մենք՝
Հայացքներս լուրթ գազաթին հառած...⁸:

Եվ սակայն՝ «Վերելքը ծանր էր և ուղին—ավեր»։ տողեր, որոնք Թափարիզ տեղանվան և «սուրբ ցնորքի» հարևանությամբ թաքցնում են հայոց ճակատագրի կնճռոտ խորհուրդներ ու հետքեր: Բանն այն է, որ Բայազետից դեպի Բերկրի ճանապարհի վրա ընկած Թափարիզ գյուղի հայ բնակչությունը արդեն իսկ տեղահանվել էր 1877—1878 թթ. պատերազմի արդյունքում, երբ գեներալ Ա. Տեր-Ղուկասովի ուժերը գրավել, ապա նահանջել էին այդ վայրերից: Իսկ 1915-ին գյուղին մերձակա Թափարիզ լեռան լեռնանցքների գրավման համար մարտնչել էր կամավորական Ձ-րդ գումարտակը: Հիմա էլ լեռան «դավադիր», «մահաշշուկ ծերպերով մագլցելով» և ձյունապատ գազաթից սառած դիակների միջով «շարան-շարան» վար էր իջնում կամավորական հերթական «բեռնավորված ընկերների շուն»...

Այդ ծերպերին, անշուշտ, նրան և ընկերներից շատերին ուղեկցել են «խենթային» վարակիչ մտապատկերներ, քանի որ իրենք ևս մաքառող խենթեր էին, իրական Սամսոն Տեր-Պողոսյաններ, և պոեմում, իհարկե, իզուր չի պարբերաբար հղումվում «խենթ» բառը: Երևի թե այդ գազաթներից հայացքն ուղղած Չարենցը փորձել է հեռվից-հեռու հյուսիս-արևելքում որսալ

⁷ Եղիշե Չարենց, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1986, էջ 300—301:

⁸ Նույն տեղում, էջ 301:

նախնայաց սրբազան Տղմուտի ու Ավարայրի, այլև պապենական արևային Մակուի ուրվաստվերներ, մտաբերել հերոսական դրվագներ Ռաֆֆու «հենթից», քանի որ մոտակայքում Բայազետն էր:

Մինչդեռ իրականը երրորդ գլխի վերջում խտացված այս նույնքան համառ ու տևական իրողությունն էր՝ ներթափանցված բանաստեղծի ողբերգորեն ահեղ խոհերով ու տագնապներով:

Եվ՝ ծանրաբեռնված քարավաններով՝

Դառնում էր մեկը ճամփաներից ետ:

Ի՛նչ էր հավաքել, ինչո՛ւ, ո՛ւմ գնով—

Մութ էր մեզ համար, անմիտ, անհեթեթ:

Բարեկամ էր նա... բայց մե՛ր արյունով

«Բարեկամ» դարձած մի գիշեր մեզ հետ... (22):

Այնպես որ այսպիսին է եղել մինչև Վան «առանց կռիվների» աւցած կամավորական 6-րդ գումարտակի ճանապարհը:

Գումարտակի հաջորդ հանգրվանը պոեմի շորորոգ դիտում մտաբերվող «ծովակի ափին» ընկած, հրդեհներից դեռևս այստեղ-այնտեղ միացող գյուղն է. ո՞րը... գուցե Ն. Զարյանի հայրենի խառակոնի՞սը, խուսափենք հավանականությունից: Այստեղից, «Դանթեականի» IV—VII պարունակները վերաբերում են Վասպուրական աշխարհին, և թող լրացնեն նրա դավակները, կամ զավակների զավակները... Լրացնեն վայելելով հայրենի բնաշխարհի պերճությունը՝ այդենտանների կանաչ շուրջպարով, անհոգ ժպտացող ալիքների միմյանց ձայնակցող վետվետումներով, լրացնեն պատկերադրանքներ համար՝ այդ աշխարհի քաղաքամայր Վանի մահվան ու ավերվածության մրդ-ձավանջային շափերը՝ բորբոք և սթափ պահելու համար պատմական հիշողությունը... բայց և պատկերացնեն բանաստեղծ Չարենցի ցավի ու տառապանքի անշափելի տարողությունը, մանավանդ, երբ իրողություն է այս հետաքրքիր «Աստծո ծաղրը»՝ իրոք ծաղրը. քանի որ իր հալածական-անուրախ կյանքում բանաստեղծը զարմանալիորեն առավել ահավոր հարվածներ է ստացել: Վասպուրական աշխարհի թանձրացյալ ձախերի՝ էպոս աղբրի, աշխարթից...

Գրականագիտությունը բազմիցս վերլուծորեն ներկայացրել է պոեմում «Մեռած Քաղաքին»՝ Վանին, վերաբերող հատվածները՝ ահասարսուռ տեսարաններով ու տեսիլներով: Դրանցից ամենացավածին-կիզակետայինը, անշուշտ, մնում է «Մեռած Քաղաքի շենքերից մեկում, Աչքերս անուլյս իս-վարհն հս:ռած» տողերին հաջորդած հայող նախճիրի տեսիլը.

...Գուլնգզույն շորեր, մարմիններ մեռած,

Սրունքներ կապույտ, ստինքներ դեղին,

Հետույքներ ուռած ու առնակայած—

Խեղկատակ, արագ ցատկոտում էին,—

Իմ սարսափահար աչքերի առաջ,

Անթափանց միզում գերեզմանային... (26):

Էսպես դանտեական «Դժոխքի» պարունակներից ավելի ահասարսուռ ու առասպելական տեսիլներ, որոնց հեղինակները, ի վերջո, օրերից մի օր, իրևի թե, պատասխան պիտի տան ո՛չ միայն հայ ժողովրդին, այլև մարդկության համահավաք խղճի ու արդարության պահանջատիրությանը: Անպայման հղոր, անբեկանելի փաստարկ ունենալով նաև հայ ժողովրդի բանաստեղծ որդու նվիրվածությունը համամարդկային բարձրագույն իդեալներին և նույն խոյանքով դիմադարձությունը արյունոտ բոլոր բռնություններին ու պատերազմներին: Հիշարժան է, որ «Մեռած Քաղաքին» վերաբերող հենց նույն հատվածում շարունակական ընթացքով Վանա «Մովի շառաչում, գիշերվա տոթում» նույն նախճիրներին միախառնված, հակոտնյա պոռթկումով մարմին է առնում աստվածային սիրո և հուսո հավիտենականության այս շիկացած կիզակետային տեսիլը.

...Մանուկներ ուրախ, խլրտուն ու վառ,

Արևի նման կարմրավառ լուսին...



Խեղճ երգում էին, որ Աստղիկը կա՛,
Ապրում է այնտեղ—ջրերի խորքում.
Թող բուքը ոռնա՛ աշխարհի վրա—
Իրեն ինչ՝ նա կա՛—անմահ, անհերքում,—
Եվ միշտ գեղեցիկ ու կույս կմնա
Իր աստվածային, անհուն հզորքում (27):

Կասկած չի կարող լինել, որ այդ խավար գիշերին ծովի շառաչների թևով, մանկական սեթևեթ խաղերով երիտասարդ բանաստեղծին տեսլացել է իր առաջին սերը, Կապուտաշյա Աստղիկը՝ շրջավորված-շղարշված թու-մանյանական «Աղթամարի», այլև Մեռած Քաղաքին մոտակա սիրո և գեղեցկության Աստղիկ աստվածուհու արտամետյան մեհյանական մտապատկերներով՝ խտացնելով-նշանավորելով նախնադարյան ժամանակներից հա-բատեղ հայ ժողովրդի դարավոր հավատարմությունը մարդկային սիրուն, բնության կենսագործ սիրո մշտահունչ արարչագործությունը:

Կենարար սիրո և կենսագործ բնության, մյուս կողմից՝ նախճիրի ու ավերմունքի ներհակ լիցքեր, որպիսիք պոեմում նոր թափ են առնում սկսած վեցերորդ գլխի մուտքից.

Մեռած Քաղաքից մենք ճամփա ընկանք
Ճիշտ դեպի կոիվ—դեպի ռազմավայր:
Գնում էինք մենք՝ համառ ու ուրախ՝
Կովելու, կովով մեռնելու համար:
Նահանջում էր դեռ թշնամին արագ—
Եվ չէինք մենք դեռ հանդիպում իրար՝

Բայց թնդում էին թնդանոթները, կապույտ լեռներում փռելով հուր ու ծուխ... նորից հոգնաբեկ վերելք ձյունապատ լեռների կողերով ու գագաթ-ներով և նորից դիր ու դիր լեռնանցքներում ու ձորերում... Մի տեղ էլ այլանդակ փռված մի դի՛ կողքին ջղաձգորեն մեռնող մի ձի և այժմ էլ այդ անբան-անելու անասունի բախտով բորբոքված հակագաղութատիրական-հակաբռնատիրական նման մի հարցմունք—հանդիմանանք. «Քեզ քո տերն այստեղ ծծե՞նք թերեք», «էլ ինչո՞ւ էր նա ավերել ուզում: Այս դա-ժան մարտին ո՞վ նրան հրեց» (29, 30): Հիրավի, դժվար է պատկերացնել ցասման ու բողոքի այսօրինակ դիզվող-գալարվող թափ՝ փոխակերպվող ամենատարբեր տեսքով, ձևով, ձայնով: 18-ամյա Զարհնցի գրչով արնա-ծարավ ավերմունքի դեմ բողոքում է հողի ամեն թիզ՝ անթաղ, անշիրիմ, խեղդամահ-խոշտանգված արարածներով, հուր ու ծխի մեջ «ծուկորեն մխա-ցող» բույս ու բուսականություններ, քար ու քուղով, արնագույն-արնահամ ջրերով...

Թնդանոթաձգությամբ շարունակված դեկտեմբերյան այս օրը՝ ըստ պոեմի նույն գլխի տասնմեկերորդ հատվածի, վերջանում է թշնամու պար-տություններով, և լեռան փեշի մոտերքում դիրքավորված կամավորական գու-մարտակի տղաները հեռանում են հանգստանալու հեռավոր մի գյուղում. ինքը ևս ընկերով, հետո էլ միայնակ.

Վերելքը ծանր էր, ծանր էր՝ ի՞նչ արած...
Պետք է իմ բոլոր ուժերը լարեմ,
Հասնեմ—նո՛ր քնեմ հոգնած, բեզարած,
Որ երազները հոգիս օրորեն... (31, ընդգծ.՝ Ալ. Զ.):

Հանուն հոգի օրորող երազների հանձն առնել նման մի վերելք՝ վայ-րենի քամու բերանն ընկած, թանձր մառախուղի միջով, գերմարդկային այսպիսի ճիգով.

...Մենակ, անընկեր: Հսկա բուհ պես
Ավազե մատներն աչքերիս հառած՝
Ոռնում էր քամին: Ընկնում էի ես,
Նորից բարձրանում ու անցնում առաջ:
Երբեք չէր եղել մարմինս-այնքան հեզ,

Եվ հոգիս-այնքան կամփի ուժ առած (31, ընդգծ. Այ. 2):

Եվ սա բանաստեղծի կյանքի, բախտի ու վարքի բանաձևն է՝ Հովհ. Թու-մանյանի ասած «կյանքի վսեմ երազները»¹⁰ երազելու ոգեղեն խոյան-քով, խոյանքի կամային ուժի առջև նահանջող մարմնի հեզությամբ... Արդ ո՞րն էր այն գյուղը, որին նման ինքնակամ շարչարանքով հասնում է քնարական բանաստեղծը՝ «Միշտ նո՛ւյն ծովափով—անվե՛րջ ու անվե՛րջ» (31): Պոեմի ընձեռած և աշխարհագրական տվյալների համադրումով այդ գյուղը հնամենի Ռշտունյաց աթոռանիստ Ոստանն է (թուրքական վերան-վանումով՝ Գեվաշ): Ասել է՝ վերը հիշատակված վեցերորդ գլխում ներկա-յացվող մարտերը տեղի են ունեցել Հայկական Տավրոսի Արտոս լեռնագա-զաթի ծովահայաց ստորոտներում: Հակված ենք կարծելու, որ Արտոսի ու Ոստանի և շրջակայքի նույն այս օրվա կամ օրերի երազանկար մտապատ-կերներով է հյուսված նաև Չարենցի հայտնի «Տեսիլաժամեր» շարքում տեղ գտած «(Հայրենիքում)» բանաստեղծությունը.

Չյունապատ լեռներ ու կապույտ լճեր:

Երկինքներ, որպես երազներ հոգու:

Ծրաղներ, որպես մանկական աչքեր:

Մենակ էի ես: Ինձ հետ էիր դու...¹¹

Հաւանալի է, որ այս տեսիլաժամը ևս հասցեագրված է բանաստեղծի առաջին սիրուն:

Ինչ վերաբերում է մարտերի ավելի ամբողջական տեղանքին ու ժամա-նակին, ապա մոտավոր վերապահությամբ այն պետք է որ ըստ բնակա-վայրերի՝ համապատասխանի Ոստանից հարավ-արևելք և արևմուտք շրջա-գծով ծավալված հարձակողական գործողությունների 6-րդ դումարտակի համար նախածրագրված այն հրամանին, որը քաղված է Գ. Անանյանի մենագրության մեջ. «12/13-ին գիշերել Կարան դաշտ... գյուղի մոտ, 13/14-ին՝ Արին հան գյուղի մոտ, 14/15-ին՝ Իլի գյուղի մոտ, նոյեմբերի 15-ին (առավոտյան) ժամը 7-ին լինել լեռնանցքի... գագաթին, Իլի և Մո-շիկ գյուղերի միջև: Գրոհել Մոշիկ, Արիշ-վանք գյուղերի վրա, ռազմաճա-կատ մտնել Հաջի-Գեվա, Վալանդա գյուղերից... ապահովել ռազմակարգի ձախ թեք»¹²:

Քարտեզների վրա հաջողվեց Ոստանից հարավ կարճ տարածության վրա գտնել Իլի՝ հայկական Հիլի դուղանունը, ապա Այրի վանք՝ Իրդվանիք և թուրքերենով աղավաղված այլ անուններ, ինչպես՝ Անգղ՝ Ինկեյ և այլն: Իսկ Վանա լճի ավելի դեպի արևմուտք՝ Պիլի-Դաղը, և սա նշանակում է, թե այդ վայրերից ամեն մեկի համար 1915-ի հոկտեմբերից նոյեմբեր ամիսներին որքան ահեղ են եղել գումարտակի մղած մարտերը:

Բայց ամենակատաղին առջևում էր, պոեմի յոթերորդ գլխում նկարա-գրված «անողոք ու գոռ» այն կռիվը, որում նահատակվել են բանաստեղ-ծի ընկերները, որոնց հիշատակին էլ նվիրված է «Դանթեականը». «Միհրան Մարգարյան, Ստեփան Ղազարյան և Աշոտ Միլիոնյան նահատակ ընկեր-ներիս, որ ընկան սրբազան մարտում Սրբազան և Սիրասուն Հայրենիքի համար...»:

1922-ին, Երկերի ժողովածուի հրատարակության օրերին, երբ արդեն ստորագրված էր Կարսի պայմանագիրը, արդեն կարելի չէր ոչ միայն սըր-բազան: ու սիրասուն մակդիրներով, այլև հենց այնպես անունը տալ մեր կորուսյալ հայրենիքի, ուստի տողերը վերափոխվում են, վերնագրին կից «(Հիշողություններ պատերազմի դաշտից)», ապա ընկերների անունը՝ «որ ընկան Սուլդուղի դաշտում 1915 թվի դեկտեմբերի 25-ին»:

Որոշելով-որոշելով այս Սուլդուղը տեղանունների թուրքերենից՝ ռու-սերեն-հայերեն վերակերպություններով, համոզված կանգ ենք առնում հա-

10 Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1951, էջ 312:

11 Եղիշե Չարենց, Երկերի ժողովածու, հ. 1, էջ 37:

12 Գ. Անանյան, Նշվ. աշխ., էջ 34:

մարյա ուղիղ գծով Ոստանից դեպի արևելք ոչ շատ հեռու գտնվող Սուդուզ լեռան լեռնանցքներում և ստորոտներում: Երկրառ թուրքերին այդ կապակցությունը նշանակում է Ջրահովիտ-Ջրադաշտ՝ համարժեք լեռան ջրառատությանը:

Սա նշանակում է՝ ռուսական ստորաբաժանումների շարքում գումարտակի կենդանի մնացած ուժերը նոյեմբերի կեսերից շրջվել են հակառակ ուղղությամբ՝ դեպի արևելք: Ակնհայտորեն ռուսական բանակը լայնացնում էր հարձակողական ճակատը՝ միանալու արևելքից Ասորպատականով առաջ շարժվող զորամասերին, որոնց շարքերում էլ գործում էր Հայկական կամավորական երրորդ գումարտակը՝ Քեռու հրամանատարությամբ, որը և հերոսաբար ընկավ Ռևանդուզի ահեղ մարտերում 1916-ին...

Ինչպես տեսնում եք, Միլյուկովի հավաստած նեղուցներն ու Կ. Պոլիսը գրավելու համար ճակատն ընդարձակվում էր՝ հավելյալից-հավելյալ զոհերով ավելի ևս ուժազրկելով հայ ժողովրդին: Իսկ մյուս կողմից էլ սա է իրողությունը. թուրքական քաղաքագետներն ու պատմաբանները պնդում են, որ պատերազմական իրադրության մեջ զոհեր են տվել և իրենք իսկ ի՞նչ կուզենային խոշտանգված, տեղահանված զանգվածային հայության, նրա հրկիզված, ավերված ոստանների, մեռած քաղաքների դժոխային այն իրողությունների դիմաց, որոնց անդրադարձը երիտասարդ Զարենցի «Դանթեական առասպելն» է: Ի՞նչ է. գետնատարած, վիզները մեկնած՝ պատրաստվելին մորթվելու... թուրքական տրամաբանությամբ սա՞ չէ՝ արդյոք բնականոնը, որ հաճախ որդեգրում են մեր օրերի գերհզոր տեղությունների գերհզոր պարագլուխները, ավելին. հայ ժողովրդից նույնը պահանջելով նաև մերօրյա նախնիների դեպքում:

Այո՛, հայկական գումարտակները ամենուրեք կռվել են ճակատային ամենաթեթ գծերում, ինչպես և սույն մարտերում, որոնց մասնակիցն էր իսկ և իսկ հորազատ ժողովրդի ճակատագրին համազոր բախտով աշխարհ եկած Զարենցը: Եվ դրա վկայությունը «Դանթեականն» է՝ այս անգամ էլ Սուդուզի ճակատամարտին վերաբերող «...Կռիվն սկսեց անողորմ ու գոռ» տողով սկսվող յոթերորդ գլխի ահեղ դրվագներով: Բայց և այսպիսի մարտերին ուղեկցում է բանաստեղծի խոհական ծառացումը՝ շաղախված արյունահեղություն դատապարտող ցավի ու տառապանքի գերհզոր մոլեգնությամբ՝ սկսած մի ամբողջ ցերեկ տևած երկկողմանի զրոհների, ապա սվի-նամարտի այս պարունակից.

...Մենք դաշտում էինք: Ձյունոտ լեռներից
Հարձակվում էին նրանք—բյուրավոր...
Մերթ առաջ անցնում ոհմակներով նոր—
Ու փախչում էին, ու գալիս նորից:

Եվ ընկնում էին նրանք շարեշար,
Մռնչում էին գազանների պես:
Բայց խիտ, անհատնում, շարքերով վարար
Շարժվում էին նորից դեպի մեզ...(32):

Ապա սկսում է բուն սվինամարտը.

...Մենք գրկում էինք ու շանգոտում իրար,
Սվինի զարկով գլորում գետին:
Վագրերի նման խորամանկ ու շար...
Եվ կռվում էինք, և կռվում էին...(32—33):

Սրան էլ հաջորդում է «Իսկ մենք—նենգորեն նահանջեցինք հետ» տողով սկսվող պատմողական դրվագը. «նենգ» նահանջ՝ լեռնաշխարհի խավար գիշերով, ձյունագիշերի մորիկների բերանն ընկած, ձյունների մեջ թողած արնաթաթախ ընկերների դիրք, թռչող-շառաչող կարմիր գնդակների տակ.

...Եվ ընկնում էին ընկերները մեր
Սատանայական խուճապի միջում:
Եվ ընկնում էին անգի՛ն ընկերներ,
Եվ վերջին անգամ մե՛զ էին կանչում (34):

Այդ «նենգ» նահանջի պահից էլ ծայր է առնում հոգևոր տեղատվությունը՝ մարդկային խղճի ու մեղապարտության ամենանրբամիտ ու նրբագագա ալիքներով, ինչպես աստիճան-աստիճան ելևէջներով, այնպես էլ մեղայական թանձրացող խռովքի բռնկումներով՝ երկուսն էլ իրենց հերթին ողբերգորեն դրամատիկ և մարդկայնորեն ահավոր:

Եվ սակայն, շատ հետաքրքիր է. այն հզորները, որոնց ոտքերի տակ այդպես անգթորեն տրորվում-հոշոտվում էր հնադարյան մի ողջ ժողովուրդ, երբևէ պետք է արդյոք անդրադառնա՞ն իրենց բռնատիրական-զավթողական անբարո-բարբարոս գրգիռներին ու բտրոյաբանությունը:

Իսկ ահա՛, այդ հոշոտվող ժողովրդի որդու ծառացող մեղապարտությունից չգիտես ո՞րը քաղես, ո՞րը թողնես... իրոք, նման մեղապարտության ու ապաշխարանքի ընդունակ են միայն ամենավեհ հոգիները, հայ ժողովրդի զավակների դեպքում՝ Գրիգոր Լուսավորչից սերած նարեկացիաբարո տոհմիկ հոգիները:

...Մահապարտի պես
Հայացքներս հառած ահավոր Մահին՝
Մյուսների հետ փախչում էի ես...

...Մեռելների պես սփրթնած էինք,
Չէինք հավատում, որ ապրում ենք, կանք.
Անխոս հայացքով իրար թաղեցինք,
Իրար հոգու մեջ գերեզման մտանք...

Եվ գինին այստեղ ծորում է առաստ,
Եվ հարբում ենք մենք կարմիր խնջույքում,
Այլևս չկա և ո՛չ մի արատ,
Որ ծաղիկ շտա մեր գինով այգում... (34—35):

Սրանք պոեմի յոթերորդ՝ նախավերջին, գլխից քաղված տողեր են՝ կախման կետերով առկախված, բայց և նույն առկախումով շարունակվող, ներառյալ ութերորդի վերջերգային հոգևոր վերակերպությունը՝ դարձյալ ողբերգորեն դրամատիկ նոր տրամադրությունների ու խոհերի համանվագով: Այս գլխում արդեն գունային լայն վրձնահարումներով, դեկորատիվ կտավով փոխվում է հայրենի աշխարհի երազանկարը՝ հոգեթով թախծի ու տխրության, հավերժական ցնորքի քողեր հագած Ռաշտերի ոսկի հեռաստաններով, կանաչ շուրջպարով ոլորուն գյուղականերով: Այսպես խառնանկարային շարունակական ընթացքով խոհականորեն դունավորվող բնապատկերը լիցքավորվում է բնության և կյանքի հավերժական խորհուրդների, բյուր-բյուր գույների ու ելևէջների, աշխարհաշեն ու աշխարհակործան հավերժական վեճով, հավիտենական կշռելիությամբ: Նույն այս ընթացքով էլ ի մի է բերվում պոեմի միասնական գաղափարը, դանտեական «դիվային», «բարբարոս», «խելագար» դժոխքով անցնող հարազատ ժողովրդի, նրա զավակների ողբերգորեն դառն ու դաժան դրաման, բնականաբար ճեղքող հակոտնյա մարդկային անելանելիության այս երկու տարբերակով՝

...Ամեն ինչ այնպես անդորր է ու կույս,
Որ չեմ հավատում կարմիր երազին:
Միրաժի նման փարվում է հոգուս
Անէ աշխարհի քնքշությունը հին:
Բայց չէ՞ որ այստեղ ապրել են անհույս—
Եվ չե՞ն էլ լսել քնքշության մասին... (36):

Ապա մյուս ամենավերջինը.

...Ու պե՛տք է քայլե՛լ ու քայլե՛լ համառ՝
Ապրելու հսկա տենչը բեռ արած,—
Քայլել անիմաստ մի կյանքի համար,
Մարել— ու վառել աստղերը մարած,
Որ— տիեզերքի զառանցանքը մառ
Զցնդի՝ երբեք ու մնա— երազ... (36):

Ի վերջո, այս տրամադրության կախյալ կետերով էլ առկախվում է «Դանթեականի» բաղմամբությունը-բաղմախորհուրդը գաղափարը, որ կարելի է համարել Եղեռնի ժամանակներից հայ ժողովրդի գոյությանն ուղեկցող համազգային գաղափար՝ մկրատված մի կտոր հայրենիքում և տեղահան աշխարհով մեկ սփռված հայության Սփյուռքում: Այն է՝ մղձավանջային նման ճակատագրով, նման կացությանը գերմարդկային ճիգերով գոյատևել, գոյատևել ապավինելով վեհ երազների. բայց չէ՞ որ երազներն էլ տիեզերական զառանցանք չդառնալու համար պետք է ունենան ինչ-որ շարժիչ իրական ու իրականալի հող...

Ինչպես և հուշում է խորագիրը, «հայոց ճակատագրի յոթնադժոխք տարտարոսի» իմաստաբանական ակունքում ամենուրեք ներկա է Դանտե Ալիգիերիի «Աստվածային կատակերգության» «Դժոխքը»՝ դանտեական մոգական արվեստին խորապես հարազատ գեղարվեստական-համակարգային բոլոր մակարդակներով:

Զարենցի մեծությունը վկայող մի մակարդակ, որը խորիմաստ այս աստղերով է բնութագրել Պ. Սևակը. «Բայց չէ՞ որ 14—15 տարեկանում նրա դրած բանաստեղծություններն ունեն մի մակարդակ, որին «նորմալ» բանաստեղծները հասնում են առնվազն 24—25 տարեկանում: Ընդամենը 18 տարեկանում նա գրել է քնարական այնպիսի գլուխգործոցներ, որոնց տակ իր անունը սիրով կոչեն հայ բաղմադարյան քնարերգության հազվագյուտ կախարհներից մեկը, իր իսկ ուսուցիչ Վ. Տերյանը: ...Նվ նույն 18—19-ամյա ժամանակ՝ մի այնպիսի լայնակտավ պոեմ, որպիսին է «Դանթեական առասպելը», այն էլ մի այնպիսի վերջով, որ կարող է գրել միայն մեծ բանաստեղծը՝ առնվազն 30 տարեկանից հետո»¹³:

Նվ իսկապես. ըստ երևույթին պետք է բացարձակ համարել այն ճշմարտությունը, ըստ որի արվեստի ու գրականության վերին մեծությունները օժտված են լինում նաև «տեխնիկական» կարգի բնածին վարպետությամբ: Այլ կերպ չէր էլ կարող լինել, քանի որ «տեխնիկական» համարվողները էապես նույն գեղարվեստական մտածողության համակարգին համապատասխան համամասնություններ են՝ իրենց բոլոր դրսևորումներով: Իմաստալի բոլոր բառերով ու դարձվածքներով, լեզվով ու ոճով, անշուշտ շաղկապներով ու կետադրությամբ, ներառյալ եռտողյա-եռանդամ տերցինը: Համաշխարհային պոեզիայում Դանտե Ալիգիերիից անբաժան շափաբերական դժվարին մի արվեստ, որին ձեռք են պարզել հազվագյուտ մեծություններ, ինչպես Բայրոնը, Պուշկինը: Բալզ հա՛հ, հանգերի շղթայման ներսում եռանդամ սիլոգիզմով, ասել է՝ մասնավորից ընդհանուրը և հակառակը՝ երեք հաստատումով շարունակական ընթացքով խոհ, կիրք ու հուզականություն հյուսելու և առաջ տանելու տերցինի շափաբերությանն է դիմում 18-ամյա Զարենցը: Այն էլ որոշակի նորարարական այսպիսի կողմնորոշումով:

«Աստվածային կատակերգության» էջերում՝ երեք հաստատումով շղթայվում-շաղկապվում են քրիստոնեական վախճանաբանությունից ժառանգած սենտենցներ: Դրան համապատասխան տերցիններում սահմանման ու շղթայական շաղկապման բեռը մեծապես կրում են «ուստի»-ներն ու «քանզի»-ները: Զարենցի պոեմներին հետևելիս աչքի է զարնում և -երի և ու-երի, այլև կախման կետերի առատ գործածությունը: Արտաքին նշաններ, որպիսիք թաքցնում են նորագույն ժամանակների փիլիսոփայական և

13 Պ. Սևակ, Երկերի ժողովածու, հ. 5, Երևան, 1974, էջ 316—317:

գեղարվեստական մտածողությանը ինքնահատուկ պատճառակցական, պատճառահետևանքային շարունակական այլ տրամաբանությունն ու տարրողություն: Եվ-երի, ու-երի, կախման կետերի հոլովումներով, հանդից հանգ ծլարձակող շղթայականությամբ պոեմի ողջ հյուսվածքով մեկ զուգորդաբար շրջագայում են և՛ հայոց բնաշխարհի գունագծեր, և՛ արյան ու նախճիրի թելեր, և՛ քնարական հերոսի ու հերոսների բնութագծեր ու հոգեգծեր, և՛ հայրենիքի ու ժողովրդի ճակատագրի խորհուրդներ... ամեն դեպքում մարդկության հավերժական խորհուրդների բնապաշտական ու մարդապաշտական տեսագծերով:

Այսպիսով, Դանտեից իմաստներեն որդեգրած «ճանապարհի» կամ «ճանապարհորդության» «սյուժեն» վերածովում է ինքնօրինակ նոր համակարգով, մարմին առնում բազմատարր-բազմահարուստ լեզվով, ոճով ու արտահայտչականությամբ: Հանդային, կշռութային, բառիմաստային ինքնադրոշմ կազմի հետ միասին ապշեցուցիչ է զգայականից գերզգայական, հուզականից գերհուզական, մտահայեցողականից խոհական-փիլիսոփայական թևածումներով առանձնացող համեմատություն-զուգորդությունների, փոխաբերություն-այլաբանությունների, տեսիլ-խորհրդանշանների երիտասարդ բանաստեղծի արտահայտչական զինանոցը:

Այս զինանոցով և ծանրակշիռ բեռով պոեմի ինչպես զգայական, այնպես էլ հոգևոր-խոհական ողջ մթնոլորտար պատճառահետևանքային առընչակցությունների ամենատարբեր ճյուղավորումների ու ընձյուղավորումների հանրագումարով միավորվում է՝ հայրենիքի, ժողովրդի և նրա դավանների ճակատագրի վերոր նշված գերագույն գաղափարի շուրջը՝ խոհական կիզակետ ունենալով վերջերգային ութերորդ գլուխը:

Բայց ինչու, ի՞նչ տրամաբանությամբ է «Դանթեական առասպելը» վերջավորվում հենց ութերորդ և ոչ մի այլ գլխով: Դանտեի դավանած քրիստոնեական վախճանաբանության տեսանկյունից անդրադառնալով «Դժոխքի» 34 երգերից ութերորդին, Ա. Զիվելեգովը գրում է. «...Ըստ Դանտեի, բարոյական սահմանն անցնում է հենց ութերորդ պարունակի առջևով: Առաջին յոթ պարունակներում տառապող մեղավորներին նա հաճախ դատապարտում է լուկ աստվածաբանական դոգմաների հրամայականով. մարդկայնորեն նա շատ դեպքերում պատրաստ է ներել նրանց: Ութերորդ պարունակի մեղավորների նրա դատավճիռը գրեթե միշտ համրկնում է սխոլաստիկական աստվածաբանության դատավճիռին: Իսկ իններորդ պարունակի մեղավորների, այսինքն՝ դավաճանների ու մատնիչների նրա սեփական դատավճիռը մշտապես անողոր է»¹⁴:

Ըստ այդմ պարտավոր ենք գիտենալ, որ «Դժոխքի» յոթերորդ երգը ազգերի բախտի աստվածաբանական մեկնություն է: Բախտ-Ֆորտունա աստվածաբանական այն հասկացողությամբ, ըստ որի Ֆորտունա աստվածուհուն աստված հանձնել է երկրային բարիքների տնօրինությունը, ինչպես հրեշտակներին է հանձնել երկնային գնդերի ղեկավարությունը: Բախտը այդ բարիքները մերթ տալիս է մի ազգի ու տոհմի, մերթ ուրիշ ազգի ու տոհմի: Դրանից են ազգերի ու տոհմերի հարափոփոխ վիճակները»¹⁵:

Աստվածաբանական այս ելակետից և այս չափանիշով էլ Զարենցի «Դանթեականի» յոթերորդ պարունակի հայոց մեղապարտությունը ներվում է պոեմի ողջ ընթացքով՝ մի ամբողջ ժողովրդի գոյապայքարի անելանելիության և ութերորդ երգով կյանքի ու աշխարհի հավերժության երազների ասպվիճելու բարոյաբանությամբ:

Ինչ վերաբերում է հարազատ ժողովրդին ու հայրենիքին այդ վիճակի առջև կանգնեցրած սույն աշխարհի հզորներին, ապա նույն դանտեական չափանիշներով նրանց դատաստան էլ բանաստեղծը հասցնում է տեսնել երկու տարի հետո՝ 1918-ին, ստեղծված «Աթիլա» պոեմով: Մեծ իտալացու

¹⁴ Ա. Գ. Զիվելեգով, Դանտեն և իր կատակերգությունը (տե՛ս Դանտե Ալիգիերի, Աստվածային կատակերգություն, Երևան, 1969, էջ 581):

¹⁵ Նույն տեղում, էջ 672:

«Դժոխքի» տասներկուերորդ պարունակում Աթիլլայի էությանը համապատասխան նույն Ֆորտունա աստվածուհու պատգամով. այն է՝ մահ ու ավերմունք տարածող, պատերազմ հրահրող-բորրոքող հզորներին, ի վերջո, իրեն «Աստծո պատուհաս»¹⁶, իրեն «ճշմարտության մերկ խարազան» (40) սպասվում է նույն օրհասը, որը և վրեժխնդիր մոլեգնությամբ խտացված է պոեմում ճիշտ և ճիշտ վյալ. Իվանովից քաղված «Топчи их рай, Атилла!» բնարանի ոգով: Հայոց շարենցյան «Դանթեական առասպելը» բոլոր թելերով ու թևիկներով անձնականացված քնարական անմոռուն-մոռացող կերքոտ ծառացում է այդ անիրավ-անարդար, ասես, ճակատագիր դարձած Ֆորտունա-րախտի դեմ:

Բանաստեղծ Չարենցի վաստակը, առաջին հերթին, «Դանթեական առասպելը» իր վավերական ասելիքն ունի հայոց դատի բոլոր ատյաններում, մարդկային, բարոյական, իրավական-քաղաքական բոլոր գրված ու չգրված օրենքների մակարդակով:

«ДАНТОВА ЛЕГЕНДА» ЕГИШЕ ЧАРЕНЦА

А. Г. ЗАКАРЯН

Р е з ю м е

В рядах армянской добровольческой шестой дружины Чаренц в период первой мировой войны с конца сентября до конца декабря 1915 г. участвовал в боях Кавказского фронта. Сопоставление исторических событий и эпизодов поэмы позволяет проследить тот страшно мучительный путь, который дружина прошла до «Мертвого порога» Вана. Поэт показывает участие дружины в боевых действиях в Васпуракане.

Поэма Чаренца перекликается с «Адом» Данте, в частности, своим новаторством—использованием терцины. Анализ художественной самобытности поэмы дает возможность выявить, с насколько высоких нравственных позиций представлены трагические события, которые являются достоверными свидетельствами армянского геноцида.

YEGHISHE CHARENTS' „DANTHE LEGEND“

A. G. ZAKARIAN

S u m m a r y

During the first world war from the end of September till the end of December in 1915, in the rows of the sixth Armenian voluntary detachment Charents took part in the battles of the Caucasian front. The comparison of the historical events and episodes of the poem permits us to follow the terrible agonizing road, that the detachment passed up to the „Dead town“ Van. The poet depicts the participation of the detachment in battle actions in Vaspurakan.

Charents' poem is compared with Dante's „The Hell“, in particular, with its innovation—using the three-lined stanza. Analysis of artistic originality of the poem gives a possibility to reveal those high moral positions with which the tragic events that are reliable evidences of Armenian genocide, are produced.

¹⁶ Նույն տեղում, էջ 672: